



# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՎԱՆԻ  
7  
ԱՊՐԻԼԻ  
1953 թ.  
№ 83 (9770)  
ԳԻՆԸ 20 ԿՊ.

ՕՐԳԱՆ ԶԿՊ ՖԵՆՏԱՍՈՒԻ, ԵՐԵՎԱՆԻ ՕԿՐՈՒԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ  
ՀԱՅՊԱԿԱՆ ՍՍՊ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ

„Советская Армения“ ОРГАН ЦК, БОК КПА И СОВЕТОВ ДЕПУТАТОВ ТРУДЯЩИХСЯ АРМЯНСКОЙ ССР.

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԵՌՆԵՐԻ ԵՐ ԵՐԵՎԱՆԻ

«ՊՐԱՎԴԱ»-Ի ԱՊՐԻԼԻ 6-Ի  
ՍՈՍՋՆՈՐԴՈՂԸ



Մեր մամուլում հրատարակված է ՍՍՏՄ ներքին գործերի մինիստրության հաղորդագրությունը վնասարարության, լրտեսության մեջ և Սովետական պետության ակտիվ գործիչների նկատմամբ տեղափոխական գործողությունների մեջ մեղադրված բրժիչկների խմբի գործի նախնական քննության բոլոր նյութերի ու մյուս տվյալների մանրագնին ստուգման արդյունքների մասին:

Ստուգման հետևանքով պարզվել է, որ այդ գործով պատասխանատվության կանչված պրոֆեսորներն ու բրժիչկները ՍՍՏՄ Պետական անվտանգության նախկին մինիստրության գործից ձերբակալվել էին սխալ կերպով, առանց որևէ օրինական հիմքի: Ինչպես ասվում է ներքին գործերի մինիստրության հաղորդագրության մեջ, ստուգվածը ցույց տվեց, որ այդ անձանց դեմ առաջ բաշված մեղադրանքները կեղծ են, իսկ փաստական տվյալները, որոնց վրա հենվում էին բննչական աշխատողները, անհիմն են: Պարզվել է, որ ձերբակալվածների ցուցմունքները, որոնք իրր հաստատում էին նրանց դեմ առաջ բաշված մեղադրանքները, Պետական անվտանգության նախկին մինիստրության բննչական մասի աշխատողների կողմից ստացվել են բննչության այնպիսի եղանակներ կիրառելու միջոցով, որոնք անթույլատրելի են և խստիվ արգելված են սովետական օրենքներով:

Այդ գործն ստուգելու համար ՍՍՏՄ ներքին գործերի մինիստրության կողմից հատկապես առանձնացված բննչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, ձերբակալված պրոֆեսորներին ու բրժիչկներին ներկայացված մեղադրանքները լրովին հերքված են, և նրանք կալանքից ազատված են:

Քննությունը սխալ վարելու մեջ մեղավոր անձինք ձերբակալված են և բռնական պատասխանատվության են ենթարկված:

Ինչպես կարող էր պատահել, որ ՍՍՏՄ Պետական անվտանգության մինիստրության ընդերքում, մինիստրություն, որը կոչված է կանգնած լինելու Սովետական պետության շահերի պաշտպանության դիրքերում, սարքվեց պրովոկացիոն գործ, որի զոհը դարձան սովետական ազնիվ մարդիկ, սովետական գիտության ականավոր գործիչները:

Դա տեղի ունեցավ ամենից առաջ այն պատճառով, որ կոչման բարձրության վրա շարժվեցին Պետական անվտանգության նախկին մինիստրության ղեկավարները: Նրանք կարելի էին ժողովրդից, պարտիայից, մոռացել էին, որ հանդիսանում են ժողովրդի ծառաները և պարտավոր են կանգնած լինել սովետական օրինականության պաշտպանության դիրքերում: Պետական անվտանգության նախկին մինիստր Ս. Իգնատևը ցուցաբերեց քաղաքական կուրսություն ու բեռնաբացություն, ենթարկվեց այնպիսի հանցավոր ավանտյուրիստների կամքին, ինչպիսին է մինիստրի նախկին տեղակալ և բննչական մասի պետ, այժմ ձերբակալված Ռյուսինը, որն անմիջականորեն ղեկավարում էր բննչությունը: Ռյուսինը գործում էր որպես մեր պետության, մեր ժողովրդի թաքնված թշնամի: Փոխանակ աշխատելու Սովետական պետության իսկական թշնամիներին, իսկական լրտեսներին ու դիվերսանտներին մեղակցեց ուղղությունը, Ռյուսինը բռնել էր կատաղարությանը խաբելու ուղին, հանցավոր ավանտյուրիզմի ուղին: Ուսանաբերյով պետական պարտադիր աշխատողների բարձր կոչումը և պարտադիր հանդեպ, ժողովրդի հանդեպ իրենց ունեցած պատասխանատվությունը, Ռյուսինը և Պետական անվտանգության մինիստրության մի քանի այլ աշխատողներ իրենց հանցավոր նպատակներին հասնելու համար դիմեցին սովետական օրինականության ամենակոպիտ խախտումների, ընդ-

հույ մինչև մեղադրական նյութերի ուղղակի կեղծումը, համարձակվեցին ծաղրածանակի ենթարկել սովետական քաղաքացիների անձնոմխելի իրավունքները, որոնք գրված են մեր Կոնստիտուցիայում:

Իր բարձրության վրա շարժվեց նաև բրժիչկների խմբի գեմ մեղադրանքի կապակցությամբ ստեղծված բժշկական-էքսպերտ հանձնաժողովը, որը սխալ եզրակացություն տվեց բուժման այն մեթոդների վերաբերյալ, որ իր ժամանակին կիրառվել էին Ա. Ս. Եչերբակովի և Ա. Ա. Ժյանուկի նկատմամբ: Փոխանակ գիտական բարեխղճությամբ և օրեկտիվությամբ վերլուծելու հիվանդության ընթացքի տեղեկագրերն ու մյուս նյութերը, այդ հանձնաժողովը ենթարկվեց հետաքննության կողմից սարքված նյութերի ազդեցությանը և իր հեղինակությամբ պաշտպանեց բժշկականության մի շարք ակամավոր գործիչներին դեմ ուղղված գրպարտական, կեղծ մեղադրանքները: Ընդ որում պետք է նշել, որ բննչական աշխատողները էքսպերտներից թարցրել էին բժշկական պրոցեդուրայի որոշ էական կողմեր, որոնք ապացուցում են, որ բուժումը ճիշտ է կատարվել:

Սովետական ժողովուրդը զոհունակության զգացմունքով իմացավ, որ սովետական բժշկականության մի ամբողջ շարք ականավոր գործիչների դեմ հարուցված մեղադրանքներն ամբողջովին կեղծ դուրս եկան, որ դա մի նողկալի զրպարտություն էր մեր պետության ազնիվ և հարգարժան գործիչների նկատմամբ: Սովետական կերպարանքը և մարդկային արժանապատվությունը կորցրած մարդիկ միայն կարող էին հասնել սովետական քաղաքացիների, սովետական բժշկականության ականավոր գործիչների ապօրինի ձերբակալություններին, բննչության նյութերի ուղղակի կեղծմանը, իրենց քաղաքացիական պարտքի հանցավոր դրժմանը:

Ռյուսինի տիպի արգահատելի ավանտյուրիստները իրենց սարքած բննչական գործով փորձում էին բարոյա-քաղաքական միասնությունը, պրոլետարական ինտերացիոնալիզմի հասարակարծրով զոդված սովետական բաշարակության մեջ հրահրել սոցիալիստական իդեոլոգիային խորապես խորթ ազգային թշնամանքի զգացմունքներ: Այդ պրովոկացիոն նպատակներով նրանք կանգ չէին առնում սովետական մարդկանց նկատմամբ լստի զրպարտանքի առաջ: Մանրագնին բննչության պարզված է, օրինակ, որ այդ կերպ զրպարտվել էր աղնիվ հասարակական գործիչ, ՍՍՏՄ ժողովրդական արտիստ Միխոելը:

Ինչպես երևում է ՍՍՏՄ ներքին գործերի մինիստրության հաղորդագրությունից, Պետական անվտանգության նախկին մինիստրության օրգանները կոպիտ կերպով խախտել էին սովետական օրինականությունը, թույլ էին տվել կամայականություն և իշխանության շարաշահում: Նման հանցավոր գործողությունները չէին կարող երկար մնալ շնորհազգված ու անպատիժ, որովհետև Սովետական կառավարությունը կանգնած է մեր երկրի քաղաքացիների իրավունքների պաշտպանության դիրքերում, հողատարությունը պահպանում է այդ իրավունքները, առանց դեմքին ու պաշտոնին նայելու խտորեն պատժում է նրանց, ովքեր թույլ են տալիս կամայականություն:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մշտապես պահանջել են ու պահանջում են, որ մեր բոլոր կազմակերպություններին, ամբողջ պետական պարտադիր աշխատանքը գտնվի ղեկավար օրգանների և ամբողջ սովետական հասարակության զգոն հսկողության տակ: Այժմ, երբ սովետական ժողովուրդը

այնպես խոր զգում ու գիտակցում է մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի նշանակությունը, մենք պետք է առանձնապես զգոն և առանձնապես պահանջկոտ լինենք սովետական, սոցիալիստական օրինականության պահպանման նկատմամբ:

Համարձակորեն քաղաքացիական պետական ապարատում եղած թերությունները, այդ թվում պետական ապարատի առանձին աշխատողների կողմից թույլ տրվող կամայականություն և անօրինական փաստերը, ամենայն վնասակարությամբ ու անհատությամբ արմատախիլ անելով այդ թերությունները, Սովետական կառավարությունը դրանց մասին բացեիքաց և ուղղակի կերպով ասում է ժողովրդին: Դա վկայում է Սովետական պետության, սոցիալիստական հասարակարգի մեծ ուժը: Այդ ուժի աղբյուրն այն է, որ մեր կառավարությունը սերտորեն ու անխղճիտորեն կապված է ժողովրդի հետ, իր ամբողջ գործունեությունը մեջ հենվում է ժողովրդի վրա, հաստատ ու հետևողականորեն վարում է ժողովրդի կենսական շահերին համապատասխանող քաղաքականություն:

Անխորտակ հզորությամբ և ստեղծագործական ուժերով լի սոցիալիզմի երկիրը վստահորեն ընթանում է կոմունիզմի ուղիով: Սովետական Միությունում վաղուց լիկվիդացված են շահագործող դասակարգերը: Այդ պատճառով էլ արտասահմանյան ռեակցիոն ուժերը, փորձելով քայքայել գործունեությունը կատարել Սովետական պետության դեմ, չեն կարող մեր երկրի ներսում ունենալ քիչ թե շատ զգալի սոցիալական հենարան: Բայց սովետական մարդիկ գիտեն, որ քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը, կան և հետագայում են անխտապիելիորեն կլինեն փորձեր մեզ մոտ ուղարկելու լրտեսներ, դիվերսանտներ: Փորձեր կլինեն նաև հակասովետական նպատակներով օգտագործելու առանձին թափփուկներին, բուրժուական իդեոլոգիայի կրողների, վերասերվածների: Ժողովրդի այդ իսկական, ակնհայտի և թաքնված թշնամիների դեմ, Սովետական պետության թշնամիներին գեմ պետք է վառող միշտ շոր պահել: Պարտիան մեզ սովորեցնում է միշտ զգոն լինել:

ՍՍՏՄ Կոմստիստուցիայում գրված են Սովետական սոցիալիստական պետության քաղաքացիների մեծ իրավունքները: ՍՍՏՄ Կոմստիստուցիայի 127-րդ հոդվածը ապահովում է ՍՍՏՄ քաղաքացիների անձին անձնոմխելիությունը: Ոչ որ չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի որոշմամբ կամ գատնապես սանկցիայով:

Սոցիալիստական օրինականությունը, ՍՍՏՄ Կոմստիստուցիայում գրված սովետական քաղաքացիների իրավունքների պահպանումը Սովետական պետության հետագա զարգացման և ամրապնդման կարևորագույն հիմքերն է:

Ոչ որի թույլ չի տրվի խախտել սովետական օրինականությունը: Յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կուլտանտական, յուրաքանչյուր սովետական ինտելիգենտ կարող է հանդիպել ու վստահ աշխատել, գտնել սով, որ նրա քաղաքացիական իրավունքները գտնվում են սովետական սոցիալիստական օրինականության հասարակ պահպանության տակ:

Սովետական մեծ պետության քաղաքացին կարող է վստահ լինել, որ ՍՍՏՄ Կոմստիստուցիայով կաշխատվող մեր իրավունքները սրբորեն կիրառվեն ու կպահպանվեն: Սովետական կառավարության կողմից Այդ իրենց Սովետական կառավարության շուրջը ՍՍՏՄ ժողովրդների հետագա սիրտ, համախմբման, մեր Հայրենիքի հզորության հետագա ամրապնդման և Սովետական Միության միջազգային հեղինակության անշեղ աճի կարևոր պայմաններից մեկն է: